

ՅԱԿԵԼՈՒՄ

998 ԹՐՈՒՅՑ

ՄԱՍԻՆԱԼՐԱԳՐՈՒՅՑ

Հինգշլեթի 13 ՕԴՈՒՍՈՒ 1870

ԴՐԱ 40 ՓԱՐԱ

ԿՈՍՏԱԴԻՆՈՒԹՈՒ 13 ՕԴՈՒՍՈՒ

ՀԵՅՄԵԳՐԱԸՆԻՔ

Փարիզ 24 օդուսոս իրիկուն:

Ֆալուպուրկի անձնատուր ըլլալը
սուտ ելաւ, Պաշտօնական օրագրին
իրիկուն թերթը կըսէթէ ներկայ պա-
րագաներուն մէջ խաղաղական բանակ-
ցութեանց եւ ոչ խոլ խօսք կրնայ ըլ-
լալ։ Տեղւոյս լրագիրները բացարձա-
կապէս սուտ կը հանեն բրուպիացւոց
այն հեռագիրը թէ Գաղղիացիք պատ-
դամաբերի մը (երկու բանակաց զօրա-
դը ըլլուկներուն իրարութեապան զրկած
անձի) վրայ կըակ ըրեր են:

Սըլճն (Պէլճիքա) 23 օդուսոս

Մեր սահմանադլիխին շարունակ
բռնաբարուիլն իմաց կը տրուիմեղ։
Մերթ բրուսիացւոց զինուորներ Պէլ-
ճիքացի հրացանաւորներուն վրայ կը
յարձակին եւ Պէլճիքայի ու լուքսամ-
պուրկի հողը կը մանեն, մերթ ալ բը-
րուսիացւոց համար պաշար կանցունեն
կամ անոնց վիրաւորները կը փոխադ-
րեն։ Այս դործերն անհանդասութիւն
կուտան մեր երկրին, եւ կը վսիսնեն
որ Պէլճիքայի կառավարութիւնն՝ իր
չեղութեանհակառակ՝ կասկածի կոմ-
ուստասիսանատութեան ներքեւ կի-
նոյ։

Սըլճն 23 օդուսոս.

Խտալիական կառավարութիւնը կը
խնդրէ որ երկու խոպացի գատաւոր
ալ՝ Անգղիացիք գատաւորաց հետ ներկայ
գտնուին աւաղակներուն քննութեա-
նը։

Փարիզ 23 օդուսոս. իրիկուն

Ամեն պատրաստութիւն եղած է
փարիզի զօրեղապէս պաշտպանութեա-
նը համար, ինթէ հարկ ըլլայ: Պաշտօ-
նական օրագիրն հրամանադիր մը կը
հրատարակէ, որով նիշվի ու ներկի
դաւաւուները պաշտպան վիճակի մէջ
կը դրուին։

Օրէնսդիր Ժողովին մէջ ներքին
դործոց պաշտօնեայն լսաւ թէ երեկ-
ուընէ ՚ի վեր կառավարութիւնը պա-
տերազմէն լուր մ'առած չէ: Պ. թի-
էր ըսաւ թէ յանձնաժողովը կը մեր-
ժէ կոմն բէրաթրիք առաջարիւթիւ-
նը, որով կը խնդրէր որ Օրէնսդիր Ժո-
ղովը անդամներէն ինն հոդի փարիզի
պաշտպանութեան Մասնաժողովին վը-

լայ աւելիան. նմանապէս չընդունիր
երիք անդամամաւելլցնելու առաջարկու-
թիւնը, բայց ուրիշ քննութեան ար-
ժանի առաջարկութիւն մ'երեւան եւ-
լած է, եւ վաղը պիտի քննուի:

Փարիզ 24 օդուսոս

Պաշտօնական օրագիրը կըսէ թէ
աղդային փոխառութեան համար բայց
ուած ստորագրութիւնը փարիզի եւ
դաւառաց մէջ 620 միլիոն ֆրանքի
հասած էր երեկ, եւ տակաւին այսօր
ալ սկսի շարունակէ:

Մայրաքաղաքին ֆար Տիւ Պոսֆը
եւ ուրիշ մէկ երկու օտարագղիքի ըլլա-
գիրներ՝ երկուշաբթի օրը Փարիզի վը-
րայ քանի մը ծանրակշիռ հեռագիր-
ներ հրատարակած ըլլալով, որոց աղ-
դիւրը ծանուցած չեն, շնծու ըլլալու
կասկածով գատաստանի ներքեւ ին-
կան:

Գաղղիոյ լրագիրները՝ 20-30 տա-
րեկան եղող բոլոր Գաղղիացւոց շար-
ժուն պահապան զինուորը ըլլալու եւ
պատերազմի երթալու որոշումը ծա-
նուցած ժամանակին կըսեն թէ վեր-
ջին անգամեղած վիճակագրութեամբ
Գաղղիոյ մէջ 3.760000 մարդ կայ 20էն
30 տարեկան. իսկ 30-40 տարեկան
մարդոց թիւը 3.128000 ի կը հասնի:
Այս վերջիններն ալ քաղաքները պահ-
պանելու համար պիտի զինուորին:

Պալթիկէն եկած ըւրերը կը ծա-
նուցանէն թէ Գաղղիացիք 50 էն աւե-
լի գերմանական նաւ բոներ են հա-
րուստ վաճառքով լցուն:

Ուրիշ ծամերու մէջ բոնուածնե-
րուն թիւը յայանի չէ:

Պէլընէն օդուսոս 12 թուով հե-
տեւեալը կը դրեն:

Բրուսիոյ թագուհին անձամբ մաս-
նաւոր իննամք կը տանի գերի բոնը-
ւած Գաղղիացիք զօրականաց, կտաւիք
եւ ուրիշ հարկաւոր նիւթեր տուաւ
անոնց պաշտօնականերուն եւ զինուոր-
ուաց: Բրուսիացիք տիկնանց մասնաժո-
ղովս ալ զավարար ըմպելիք եւ սիկար
կը մատակարարէ անմեց:

Երկաթուղիոց կայաններն ալ,

Բրուսիացիք տիկնայք քարտուղարի պաշ-
տօն կը կատարին գերի բոնուած դաղ-
ղիացիք զօրականաց քով, եւ անոնց նա-
մակները Գաղղիացիք զըկելու հոդ կը տա-
նին:

Լոնսուա բնակող իրամսասայիններն
կնապատ Գաղղիոյ եւ ընդդէմ Բրու-
սիոյ մեծ եւ հանդիսաւոր ցոյց մ'ը-
նելու պատրաստութիւն կը տեսնէին;
Բայց երբոր լսեցին թէ գաղղիացիան
զօրքերն Հռոմէն մեկներ են: պատ-
րաստութիւնը ետ թողուցին, սաստիկ
բարկանալով նարօլէնի գէմ, որուն
այս ըրածը մատնութիւն կը համարին
Ս. Պաղին նկատմամբ:

Լէվլնթ Հէրըլտի առջի օրուանն
թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք:

Պիւսիւէլ 17 օդուսոս. — Լօնժվիլի
կուուին մէջ Բրուսիացւոց կորուստը
խիստ մեծ եղաւ: Կոլցի գունդին յար-
ձակումը բոլորվին պարապ ելաւ, եւ
խառն ՚ի խուռն ետ քաշուելու ստիպ-
ուեցաւ. Մանթէօփէլ զօրապետին հը-
րամայած առաջին զօրաբանակին ալ
նոյնպէս շտա վես կրեց Գաղղիացւոց
Լատմիրո զօրապետին թնդանութե-
րէն: Այս հինգ ժամու կառին մէջ
Բրուսիացւոց ըրած կորուստը՝ Վոլթի
եւ ֆօրպախի կուներուն մէջ ըրած
կորուստներուն միացեալ գումարէն ա-
ւելի պէտք է ըլլայ: Կիյոմ թաղ աւուն
իրիկուան պատերազմի դաշտը համեր-
լով, այս արիւնուս կուուին արդիւնքին
վրայ շատ արտմած երեւցաւ: Գաղղիա-
ցիք լաւ գերքի մէջ պատսպարուած
ըլլալուն պատճառաւ քիչ վես կը-
րեցին:

Քօլօնիա 16 օդուսոս. — Բրուսիաց-
ւոց բանակին պաշար գանձելու գըժ-
ւարութիւնները կաւելնան: Վօժի գա-
ւառին մէջ գաղղիացւոց գեղացիները
Բրուսիացւոց առանձին զինուորները
կապաննեն եւ անոնց կրած նպարները
ձեռուընուն կառնուն:

ԿՈՍՏԱԴԻՆՈՒԹՈՒ 13
ԷԽԱՍՄԸ ՌԱՄԱԿԱՆ
12 օդուսոս. չորեքշարթի իրիկուն 46 06
13 » հանդշարթի առաւոտ
բացուեցաւ 46 03
Ժամ հինգ կը կառնուն 44